ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ

ՄԱՐԶՊԵՏ

<<16>> << նոյեմբեր>> 2016 թ N 126

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱԼՎԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 96-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Ալվարդ Ղազարյանի հետ կնքած 2011 թվականի նոյեմբերի 16-ի N194 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը, 2016 թվականի նոյեմբերի 2-ի N 01/14/6853-16 ծանուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2016 թվականի նոյեմբերի 16-ից լուծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Ազատեկի միջնակարգ միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Ալվարդ Ղազարյանի հետ կնքած 2011 թվականի նոյեմբերի 16-ի N194 աշխատանքային պայմանագիրը:
2. 2016 թվականի նոյեմբերի 16-ից Ալվարդ Ղազարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Ազատեկի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ